

ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ԵԶՄԻԱԾՆԻ

„ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՃՈՒՅԴՈՅՆ“

(Հայ հավատացյալների ուսագրության)

Պետրոսի Ա-րդ ապարան

ՅԵՐԵՎԱՆ.

1924.

ԵԶՄԻԱԾՆԻ „ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ“

(Հայ հավատացյալների ուշադրության)

Քրիստոնեյական նախկին դարերի յեկեղեցական գրականությունը, նույն իսկ Ավետարանն ու առաքելական թղթերը վկա յեն, վոր Քրիստոսը բոլոր հեթանոսական կրոնները հիմքից քանդեց իրենց ծեսերով ու արարողություններով, իրենց շատախոս ազոթքներով ու մոգություններով, կախարդանքներով, իրենց ամբողջ խարերայությամբ, իրենց ազգային նեղ շահերի պաշտամունքով ու անմարդասեր ատելությամբ գեպի ուրիշ ազգեր, իրենց զոհաբերություններով ու ձևերով, իրենց բոլոր դասակարգերով, վոր հիմնված եյին ծայրահեղ անարդարության և անհավասարության վրա:

Աչքի ընկնող փաստ ե, վոր Ավետարանը հեղափոխական մի զորեղ կոխվ ե հարուստների և հոգեորդասի դեմ, աշխարհիկ և հոգեորդ միապետների դեմ:

Այս հին, փթած իրավակարգի և կեղծ բարեպաշտության ավերակների վրա Ավետարանի հիմնադիրն ու նրա աշակերտները կառուցին յեղբայրության, ազատության, արդարության, ճշմարտության մի բարոյական կազմակերպություն, վոր կոչվեց քրիստոնեյակոն կենդանի համայնք:

Այդ անդրանիկ համայնքը չուներ վոչ յեկեղեցի (հատուկ շենք), վոչ իշխանություն, վոչ ծես, վոչ արարողություն, վոչ զոհաբերություն, վոչ դասակարգ:

Այդ մի համայնական կազմակերպություն եր, ուր մեկը ծառայում եր ամենքին և ամենը մեկին:

Նըանք՝ այդ հազարավոր բազմությունը հավասար աշխատում ելին, հավասար վայելում, ինչպես մի ընտանիքի անդամներ, առանց ցեղի և սեռի խտրության:

Նըանց մեջ տիրող բարոյական կապը սերն եր սեր գեղի մերձափորը, նման մարդը. և սերը նրանց համար Ասաված եր: Քրիստոսը նրանց համար սեր եր և կենդանի գործ:

Այսպես եր նախնական քրիստոնեյությունը, քանի վոր հավատացյալների համայնքը կտղմված եր բացառապես ժողովրդի ազգատ, աշխատավոր զանգվածից:

Յերրորդ գարու կեսերից քրիստոնեյական գաղափարների ուժգին քարոզը ձկնորսների, բանվորների, արհեստավորների, զյուզացիների, ստրուկների և տանջվածների կրակ խոսքով սարսափ ազգեց բոլոր աշխարհիկ և հոգևոր միապետներին, բռնակալներին, շահագործող հարուստներին և նրանց վոսկե զորությունը շարժեց:

Սարսափահար վերին դասերը յուրատեսակ տարերական հեղափոխության առաջ ստիպեցին քրիստոնեյություն ընդունել ձեականորեն և նոր կրօնի անունով պահեցին իրենց դիրքերը, աղավաղելով նախնական քրիստոնեյության վոգին, մոցնելով նրա մեջ են հինը, հեթանոսականը իր բոլոր ձեերով, ձեսերով սնապաշտություններով, իշխանությամբ:

Աշխարհիկ միապետները իրենց կարգերի որինակով ստեղծեցին հոգեսոր դաս, կաշառեցին նրանց կյանքի բարիքներով, դաշն կապեցին նրանց հետ և Քրիստոսի անունով ծանրացան տանջված բազմության վրա. մեկն իր Փիզիքական ույժով, մյուսը՝ Քրիստոսի անունով:

Հոգիների և մարմինների բռնության դեմ բողոքեցին իսկական քրիստոնյաները, վորոնց դեմ յելան

պաշտոնական յեկեղեցին և պետությունը անհծովով ու
կրակով, բանտով ու մահով:

Նրանց անվանեցին աղանդավորներ և կոսորեցին
քյուրիբով:

Հեթանոսությունը իր մաքառման շրջանում այն-
քան արյուն չի թափել վորքան Քրիստոսի անունը
կրող պաշտոնական յեկեղեցին:

Հայոց յեկեղեցին նույն պաշտոնական քրիստո-
նեյական յեկեղեցիներից մեկն է: Հայաստանում մա-
քուր ե յեղել քրիստոնեյությունը, քանի հայածվում եր,
քանի կոսորվում եյին քրիստոնյաները: Պետական
կրոն դառնալուց հետո, նա յեղել ե թագավորների զի-
նակիցը ընդգեմ ժողովրդի և յերբեմն ել փորձեր և
արել նույն խոկ աշխարհիկ իշխանությունն ել իր ձե-
ռին ամփոփելու:

Հայոց յեկեղեցին ստեղծել ե նվիրապետություն,
իր ժամանակի ալիրող վոգու համաձայն, միապետ կա-
թողիկոսվ, վոր հակառակ ե քրիստոնեյության: Հո-
գեոր թագավորները համարվել են ժողովրդի ընտրյալ,
բայց իրոք այլպես չեն. նրանց ընտրել են «թագա-
վորն ու նախարարները, իշխաններն ու ազատները,
զորավարներն ու պաշտոնյաները, հարուստներն ու
կալվածատերները»:

Ժողովրդի անունն ե շահագործվել. նրան թողել
են տգիտության, խավարի մեջ. կարել են գաղտիարա-
կան աշխարհից, թեև զիր ու գրականություն ենք ու-
նեցել, վոր միայն հոգեոր և իշխանական դասի սեփա-
կանությունն ե յեղել, կապել են ծեսերի հետ, սար-
սափեցրել են հանդերձյալ կյանքի պատիժներով և
երբեք վոչխարի՝ բուրդ խուզել կաթը կթել և ապա
ժորթել ու միսը կերել ուրիշ խոսքով քամել են:

Աշխարհիկ և հոգեոր միապետները առաքինություններ են ստեղծել ու քարոզել իրենց ոգափն, խեղդելով իմացկանությունը ժողովրդի մեջ, վոր ավելի բարձր է քան առաքինությունը:

Յեկ մենք զարեղար, սերնդե սերունդ առանց խորը թափանցելու այդ յեկեղեցու ներսերը մի գլուխ վոգեորդել ու ջատագովել ենք նրան, արժանիքները չափազանցըել և փառաբանել:

Բայց պիտի զար ժամանակ, վոր իմացականությունը զորանար տանջված ժողովուրդների մեջ և հեղափոխության փոթորկով կործաներ այդպիսի իրավակարգերը, ըմբռնումներն ու թխովի առաքինությունները:

Յեկ աշխարհի յերեսին փչեցին վերածնության դարի կրօնական հեղափոխությունը, Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, Անգլիականը, իսկ այսոր համաշխարհային մեծ հեղափոխությունը Ռուսաստանի հերոսական ուժերով և նրա ահարկու շնչով զահեր խորտակվեցին, զահեր են յերերում անդունդի բերանում և ինքն՝ աշխարհի իսկական տերն ու տնորենը՝ ժողովուրդը նոր կյանքի արշալույսն և վողջունում։ Հեռու հին որերի խեղզող մղձավանջը։

Հեղափոխությունները մեռելությունից դեպի հարություն կանչող զանգերն են, թմրությունից արթնացնող կոչնակները։

Սակայն հայոց յեկեղեցին՝ իր մասնակի արժանիքներով հանդերձ, իր ավանդական, հեքյաթական քնի մեջ մրափում ե։ Նա լսելու ականջ չունի, տեսնելու աչք չունի, հարություն առնելու շնորհքը չունի, սխալն ու մոլորությունն ուղղելու բարոյական արիությունը չունի։

Նա իր թմրության մեջ, ինչպես յերազում, միշտ մի աղոթք ունի. «Մեծի Աթոռույս Սրբ Կաթողիկէ Եջմիածնի անշարժություն և անսասանություն»:

Այդ հոգեոր անշարժության մեջ պետք է մեռնի նա, ինչպես ածխածնով վարակված հիվանդը:

Նա վերջին հեքն արձակելիս աչքը մի անգամ ել պիտի բանա ու տեսնի, վոր ժողովուրդ չունի, մենակ և ու մեռնում ե. և այդ որը հեռու չե, հենց այժմ ել աչքի առաջ ե:

Թվում եր, թե վերջին աշխարհագորդ գաղափարների հեղափոխությունը վոաքի պիտի հաներ կիսամեռ յեկեղեցին հանձին իր մնացած մի բուռն կրոնավորների, վորոնք պետք ե վազեցին գեղի կենդանարար գաղափարները, գեղի իրենց հեռացած ժողովուրդը, ձուլվելու նրա հետ: Բայց... խեցգետնի համար իր քարաժայուն և սիրուն, գորախն իր ճահճը, խողին իր ցեխի լողարանը, մեռնողին իր անկողինը:

Վոչ մի շարժում, վոչ մի հառաջաղիմական քայլ: Այդ դեռ բավական չե. հայոց յեկեղեցին գործնական քրիստոնեյության որերում, վոր խորտակում և ամեն մի ձեականը, յերբ ժողովուրդը յերեսը թեքած նրանից հեռանում ե, նոր-նոր խավարամիտ, հետաղեմ գործեր և անում և տիմարաբար կարծում ե թե ժամանակի արագասլաց անիվը հետ տալ կարող ե:

Այդպիսի մի ակարամիտ քայլ և «Եջմիածնի Գերագույն Խորհուրդ» ստեղծելը:

Այս, վարպետորեն թիված անունը լսողի վրա այն տպավորությունը կարող է գործել թե յեկեղեցին ժողովրդականանում ե, հոգեոր միապետությունը իր փեղերն ե հավաքում: Բայց այդպես չե:

Մենք տառապում եյինք հակաքը իստոնեյական

միապետականությունից և յերազում ելինք մի ժողովադաշտը յեկեղեցի, մինչդեռ «Գերագույն Խորհուրդը» զառնում է մի խարազան հոգեոր միապետի անունով և նրա ձեռքում:

Փաստերը կհաստատեն այդ ճշմարտությունը. բայց տեսնենք նախ թե ինչպես թխվեց այդ «Գերագույնը» և վորոնց անմաքուր ձեռքերով:

1923 թ. աշնան ամիսներում Եջմիածնի յեպիսկոպոսները ինչ վոր գաղտնի քչփչոցի մեջ եյին: Այդ խորհրդակցությունների հետևանքով Մհարոր արքեպիսկոպոսը ճանապարհորդեց Թիֆլիս, Գանձակ, Բագու: Այդտեղից բերել եր առաջնորդների, մի քանի քահանաների և նույնքան ել աշխարհականների ստորագրությամբ միշտ գիր, միակերպ վոճով ու բովանդակությամբ, թե, կամենում ենք, վոր «Գերագույն Խորհուրդ» լինի:

Այս թղթերի հետ միասին Եջմիածնի հինգ յեպիսկոպոս խմբագրում են մի ուրիշ թուղթ, մի վերջնագիր կաթողիկոսին, վորին անվանում են անգութ, անփոյթ, անսիրտ, ապիկար, վորին վոչ վոք չի լսում, նկարագրում են յեկեղեցու անկյալ վիճակը, վոր վերագրում են կաթողիկոսին և գործադուլի ու այլ սպառնալիքներով պահանջում են, վոր իրենցից կազմի «Գերագույն Խորհուրդ»: Գրում են մի կոնդակ իրը թե կաթողիկոսը ինքնահոժար կամքով «Գերագույն Խորհուրդ» և կազմում: Մտնում են կաթողիկոսարան, կարգում իրենց սպառնալիքը և ստիպում են կաթողիկոսին կոնդակն ստորագրելու: Յեվ սարսափահար կաթողիկոսն ստորագրում է և հայ ժողովրդին իր յեպիսկոպոսների հրամանով խարում, թե ինքնահոժար կերպով «Գերագույն Խորհուրդ» և կազմում:

Թղթերը ներկայացնելուց առաջ՝ վերջին վայրէկնին իմ ձայնն ել շահելու համար տալիս են ինձ կարգալու և ստորագրելու:

Յեթե յես անծանոթ լինելի այդ հայ յեպիսկոպոսներին, վարոնցից վոչ մի լավ բան չեմ սպասում, զուցե գայթակղիճի, բայց յես բողոքավոր կարծիք ներկայացրի, վոր կարեոր եմ համարում առաջ բերել այսուղի:

«Նորին գերապատվության տ. տեղապահին հայրապետության հայոց՝ Խորեն արքեպիսկոպոսին: Մայր աթոռի միաբան Բենիկ ծայրագույն վարդապետից ամենախոնարհ կարծիք:

Զերդ բարձր սրբազնություն: Ամսիս 29-ին հրավիրեցիք ինձ ձեր բնակարանը կարգալու մի զիմումն Ամենայն Հայոց հայրապետին, վոր գրված և ստորագրված և Եղմիածնի միաբանության կողմից և առաջարկեցիք ինձ ել ստորագրելու, յեթե համաձայն եմ:

Ինձ համար միանգամայն անակնկալ եր այդ թուղթը. այն խնդիրները, վարոնք առաջ բերված են թղթի մեջ, ամիսներով գաղտնի խորհրդակցություն են յեղել մի քանի յեպիսկոպոսների համար, վորին չեն մասնակցել և վոչ մի վարդապետ. մինչդեռ հայոց յեղեղեցու պատմության մեջ յես չգիտեմ մի գեպք, վոր ընդհանրական յեկեղեցու կազմակերպությունը փոխելու խնդիր լինի առանց վարդապետների:

Այնուհետ ակնարկված ե և մի «արձանագրություն», վոր ինձ համար մթին աշխարհ ե: Յես չը գիտեմ թե այդ ինչ արձանագրություն ե, վորի հիմունքով կազմվել ե զիմումը, ավելի ճիշտ վերջնագիրը (ուլտիմատում):

Հասկանալի յի թե ինչու զգվարացա գրիչ վերց-

նել և առմիջապես ստորագրել մի թուղթ, հայտնի
խոշոր խնդիրների թուղթ, վորոնց լուծման
շուրջը դատողություններ չեմ լսել, վորոնց վրա
դատողություններ չեմ ավել և ժողովականների նպա-
տակին և արամազրության միանգամայն անձանոթ եմ:

Յերկրորդ՝ զրի մեջ միանգամայն համաձայն եմ
ոյն նկարագրությանը, վոր վերաբերում և հայոց յե-
կեղեցու անկայալ վիճակին, սակայն շարունակության
մեջ կան խոշոր կետեր, վորոնց առջև կանգ եմ առ-
նում, վորոնց լուծման վրա որ ու գիշերներ պետք է
մտածիմ, վոր խղճիս հետ հաշտ մնալով, մտքերիս լու-
սավորությամբ կարողանամ թուղթն ստորագրել: 33
տարվա միաբան եմ, աշխատել եմ, բարոյապես ու
ֆիզիքապես տանջվել յեկեղեցու ասպարիգում և հան-
կարծ պիտի ստորագրելի մի թուղթ առանց ինձ հա-
շիվ տալու թե ինչ եմ առում, իսկ ժամանակը կարծ
ե, մի գիշեր միայն կա արամազրությանս տակ, վո-
րովհետեւ զուք առավոտաւն թուղթը պետք է ներկա-
յացնեք: Կործ ժամանակում չեմ կարող հաշիվ տալ
խղճիս, մտքիս, վորձառությանս, վոր ստորագրեմ:

Յերրորդ՝ թղթի մեջն առված ե, վոր Հայոց հայ-
րապետ անսիրտ ե, անփույթ ե, զպրոց, թերթ ու-
նենալու վրա չի մտածում, հրամաններ և տալիս վոչ
վոք չի կատարում և այն մի շարք մեղաղրանքներ:

Այդ գատապարտությունը կարգում են ծերունի,
հիվանդ հայրապետին նրանք, վոր ընտրեցին նրան,
նրանք վոր յեպիսկոպոսական ոծումն նրանից ստա-
ցան, նրանք վոր նրա սլատմությունը հիացմունքով
զրեցին և ի արիստուր յեպիսկոպոսացան, նրանք վո-
րոնց համար սիրելի եր հայրապետը, քանի վարդա-
պետ ելին: Նրանց մեջ չեյլ յես, վոր նույն հայրա-
պետի ընտրության գեմ գիրք զրեցի, և նրա հե-

տեանքով նրա հայրապետության որոք հալածանք
կրեցի, տառապեցա, տագնապեցա, հետամնաց յեղա,
սակայն տարա ամեն վիշտ ու նեղություն:

Արդ, ինչպէս ստորագրեմ այդ թուղթը: Յեթև
այսոր զգում են թե սխալ բան են արել, թող վար-
վեն ինչպես ուղում են, յես ինչացու եմ այդտեղ:
Ինչպէս ստորագրեմ:

Չորրորդ՝ Հայոց հայրապետը մեղաղրվում ե, վոր
դպրոց չունենք, լավ. զպրոց ունենալու իրավունքը,
վորքան ինձ հայտնի ե, ներկա կառավարությունը
աղել ե, վերագարչորել ե նաև զպրոցի համար մի
շենք, արտօնել ե ծջմիածնին իր թերթն ունենալ:
Բողոքողները յերբ վորոշումն արին զպրոց բանար
թերթ հրատարակել ե ծերունի հայրապետը մերժեց:
Գործ անող միաբանությունը գործ պետք ե սահմանը
և զատապարտելի կլիներ ծերունի հայրապետը, յեթե
չհաստաներ, չորհներ այդ գործը:

Հինգերբորդ՝ մեղաղրվում ե ծերունի հայրապե-
տը, վոր հրամաններ ե տալիս, բայց կատարող չըկա:
Զկատարողները միաբանությունն ե. յեթե այդ զի-
տակցությունն ունին, թե պետք ե հայրապետի հրա-
մանը կատարվի ու չի կատարվում, ով ե ավելի մե-
րագրելին: Միթե պետք ե կամենայինք, վոր Հիսու-
սի զբանակիրն ու քրիստոնյա հայրապետը բանառվ
ու փայտով կատարել տար իր հրամանները: Այս հա-
կասության հետ ինչպէս հաշտվեմ և ստորագրեմ: Յե-
թե յես հայրապետի հիմնավոր կարգադրությունը չեմ
լսում, ի՞նչ խղճմանքով բողոքեմ հբամայողի գեմ:

Վեցերրորդ՝ պահանջվում ե, վոր Եջմիածնի մեջ
ընդհանրական յեկեղեցու համար վարչական նոր կազ-
մակերպություն մտնի զերագույն ժողով անունով:
Յեկեղեցու կազմակերպության մեջ այդպիսի խո-

շոր փոփոխությունն կարող ե կատարել միայն համապատասխան ժողովը։ Պատմության, ժողովրդական սկզբանքներին, յեկեղեցու ավանդությանց դեմ կլինի, յեթե Մ. Աթոռի մի քանի անձինք այդ փոփոխությունն անեն։ Չե գտուապարտի մեզ ազգը, վուղնաձգությունն չի համարի այդ քայլն ազգի և հայրապետի իրավանց դեմ։

Այսպիսի պատասխանատվություն ինչպես հանձն առնեմ ժողովրդի առաջ և ստորապրեմ։

Յոթներորդ՝ քրիստոնյական յեկեղեցին իր մասնակի մեջ ընդունակ ե յեղել և ժամանակակից նոր, բարելիր աշխարհայացքներ ընդունակելու և նվիրագործելու, մինչդեռ վերջնագրի մեջ կամ հետադիմական մտքեր, վորոնք ավելի շուտ գեղի կեղծիք կտանեն յեկեղեցին, վոր ինձ համար անհանդուրժելի յե։ Գտպափառներիս հակառակ մտքերն ինչպես ստորագրեմ։

Ութներորդ՝ ի՞նչ յերաշխավորություն կտ թե այդ գերազույն ժողովը ավելի լավ կտանի զործերը քան սինողը, վորի գեմ բողոքող եմ յեղել միշտ և կամ արդի միաբանական ժողովը, վոր սահմանադրություն ե, վորի վորոշումները միայն հաստատում և հայրապետը, վոր ինքն և ավել միաբանությանը, ձեռք քաշելով հոգևոր միապետի իրավունքներից, յեթե միենույն անձերը պիտի կազմեն գերազույն ժողովը, վորոնք կազմում են այսոր միաբանական ժողով։

Միաբանական ժողովին ազատություն և տրված վարելու յեկեղեցու զործերը, գերապույն ժողովը հենց այդ և, ինչու դժգոհ են բողոքողները։ Միաբանական ժողովը ավելի ժողովրդական վոզի ունի, վորովհետեւ նրա մեջ ձայն ունին բոլոր միաբանները, իսկ «Գե-

բազույնը» պիտի կազմվի սոսկ սահմանափակ թվով
յեպիսկոպոսներից առանց վարդապետների. ուրեմն
խեղգելու և միարանության ձայնը, ստեղծվելու և
բյուրոկրատ իշխանություն, վոր վարելու և գործերն
ու անձերը սպառնալիքով և պատճով:

Յեվ վերջապես մենք ստեղծեցինք նաև «Վանա-
կան խորհուրդը», վոր նույն «Գերազույն ժողով» եր-
ինչու միայն մի տարի իր գոյությունը պահեց և
մեռավ. Ուրեմն գերազույն ժողովը չե, վոր գործ և ա-
նելու, այլ գերազույն հոգին, վոր պակաս և մեր մեջ
ինչպէս ստորագրեմ:

Իններորդ՝ վերջնագիրը վերջանում և մի սար-
սափելի սպառնալիքով. այն ե՛ յեթե հայրապետը չի
կատարի ստորագրող միարանների առաջարկները,
թուղթ ստորագրողները հրաժարվում են բոլոր պաշ-
տոններից. ուրիշ խոսքով գործադուլ են անում (զա-
րաստովկա) և լքում են իրենց հայրապետին: Ի՞նչ
կամ ազգը այդ քայլի հանգեալ. միթե ծանր պա-
տասխանատվություն չեն վերցնում իրենց վրա ստո-
րագրողները:

Յեթե հայրապետի և միարանության մեջ այդ-
պիսի խոշոր անդաւնդ բացվի և յեկեղեցին այդ ան-
դունդն ընկնի տոհավության ձգտումների հետևանքով,
ով և պատասխանատուն: Զե՞ վոր այդ գործադուլը
կլսվի, միարանությունը հրապարակով պետք և աշ-
խատի արդարանալ, հայրապետն ել կարող և ինք-
զինքն արդարացնել ազգի առաջ մեղադրանքը դնելով
բողոքովների վրա: Ի՞նչ զուրս կզա զրանից. չե՞ վոր
«ամենայն տուն բաժանյալ հանձն յուր ավերեսցի»:

Առա ինչու չեմ կարողանում ստորագրել:
Վերջնագրին անմաս մնալու հիմունքներս բերե-
լուց հետո, յես պատրաստ եմ ազակելու ձեզ, սրբա-

գան հայր, հետեւալ առաջարկով, առանց այդ վերջ-
նազրի խորհեցեք ծերունի հայրապետի հետ, յես հա-
մազված եմ, վոր նա ընդառաջ կդա ամեն մի լավ բա-
նի. ծերացել ե ու ակար և բոլոր ցանկալի ձեռնար-
կությունների սկսելն ու կատարելը կթողնի միաբա-
նական ժողովին միայն թե միաբանությունը ըն-
դունակ լինի լավ գործ անելու, բառնալով իր միջից
անհաշտ վճպին, տոելությունը, յեսականությունը,
մամուռած հինը, վորոնք լսա իս միակ աղբյուրն
են Եջմիածնի անգործության և անկման:

Եսկ յեթե յեկեղեցու մեջ փռփոխություն պետք
լինի, են ել ժամանակի պահանջների համաձայն,
խնդրեցեք թող համազգային ժողով գումարի և նո-
դնի «Գերագույն Ժողով», յեթե այդ պետք լինի:
1923. 30 դեկտեմբերի. միաբան ո. Եջմիածնի Բենիկ
ծայրագույն վարդապետ»:

Յես լում յեմ այստեղ այն խոսակցությունների
մասին վոր ունեցել յեմ կաթողիկոսի հետ նախ քան
զերագույնի հաստատությունը և հետո:

Յես պնդում յեմ վոր կաթողիկոսական վերջին
ընտրությունները յեղել են բռնությամբ առանց ժողո-
վութիւնիական մասնակցության, մանավանդ Գեորգ Ե.
կաթողիկոսինը. Յես այդ ընտրության դեմ զրեցի
«Խոչու հեռացանք» գիրքը, վորովհետեւ նախատեսում
եյի թե այդ ընտրությունը, վորին ջերմ մասնակցող
եյին այդ յեպիսկոպոսներից չորսը, ժողովրդին վոչինչ
չի տալու և կործանելու և այն քիչ լավը, վոր մնացել
և յեկեղեցու մեջ:

Կաթողիկոսացրին, շահագործեցին յեպիսկոպոս,
արքեպիսկոպոս դաշտան, հարստացան, վարեցին կա-
թողիկոսին ու զործերը, ինչպիս կաւեցան, քաջալե-
րեցին անմտությունն և յեկեղեցական ու քաղաքա-

կան սխալները, կործանեցին հայ ազգի մեծ մասը,
Հայաստանը ընդարձակ գերեզման զարձրին և այժմ
առանց ազգի իրապես զահընկեց արին, իսպառ իրա-
վագուրկ ձևական նախազահություն վերապահելով
նրան:

Ինձ ցավ չե, վոր Գելորդ Ե. իրավազուրկ ե. թեր-
և ուրախ լինելի, վոր հայ հավատացյալ ժողովուրդը
հետաքրքրվեր իր յեկեղեցու վիճակով և ինքը զահա-
վեմ գլորեր նրան, վոր իր ընտրելին չե յեղեւ այլ
այդ յեպիսկոպոսների. բայց յես ուրախ չեմ, վոր ժո-
ղովրդի անունով միշտ բարբանջող այդ յեպիսկոպոս-
ները, վոր արյունով, ավերակ ու թալանով են՝ զծել
իրենց անցած ճանապարհը, առանց ժողովրդի արին
զարձյալ այդ մեծ փոփոխությունը:

Հոռովթյամբ կը համակերպելի, յեթե հայ յեպիս-
կոպոսները ժողովրդին հրավեր կարգացին, վոր նա
զար իր ընտրած ներկայացուցչությունը թողներ հայոց
յեկեղեցին բարելավելու և կառավարելու համար ժա-
մանակի վագու համեմատ, բայց չը լոեցի, վորովհետեւ
այս նոր կազմակերպությունը կաթողիկոսից զրաված
յեկեղեցին ավելի դեպի խավարը պիտի գլորեր և գլո-
րում ե. սրանք են մարդիկը չեն, վոր ժողովրդի աչքը
բանան, վոր յեկեղեցին և փակեւ, միտքը բանան,
վոր լույսից են զրկել և ժողովրդի հետ ընթանան:

Իմ ըմբռնումն ուզիգ եր, փաստերը հետզհետե
կը հաստատեն. այդ պատճառով յես բողոքեցի, խոս-
տովանում եմ մասամբ ել խօճալով այս կաթողիկո-
սին, վոր իր որոք կատարված ավերումների ամին իր
մարմնի և հոգու ավերումն և ապրում ծեր ու հիվանդ
վիճակով, բայց գլխավորապես նրա համար, վոր ա-
ռանց ժողովրդի արին այդ փոփոխությունը:

Հայոց յեկեղեցին, յեխե մի առավելություն ունի,

գոնե ձեւականորեն, եղ նրա ժողովրդական բնավորությունն եւ Յեկեղեցին ինքը հայ հավատավոր ժողովորդն եւ Նա և միակ իրավատերը վարչական, ծիսական, զավանական, տնտեսական խոշոր փոփոխություններ անելու յեկեղեցու մեջ: Վոչ կաթողիկոսը, վոչ հոգեոր դասը առանց ժողովրդի այդպիսի փոփոխություններ անելու իրավունքը չունի:

Հակառակ պարագայում լինչ է լինում. կարգում եւ ժողովրդի կապը յեկեղեցուց և ժողովուրդն ել իրավունք ունի յերես թեքել հոգեոր «պետերից» իր կապերը կարելով նրանց հետ:

Կը հարցնես, հայ ժողովուրդ, ինչ զործ է արել Գերագույն Խորհուրդը իր տգեղ սկզբնավորության որից դպրոց բացի և թերթ հրատարակում եւ, շինարարական աշխատանք կատարել եւ, վորոնց համար կաթողիկոսին անվանում ելին անպետք, անփոյթ, անսիրտ, ապիկար:

Վաչենչ, վոչինչ չի արել, վոչ մի լավ զործ:

Կատարված ապորինությունը կը մեղմանար իմ աչքում, մի յեկեղեցական մաքրիչ հեղափոխություն կը ճանաչեյի յես Գերագույն Խորհրդի քայլը, յեթե նա անմիջապես ժողովրդի հոգին լուսավորելու համար համուս գար, յեթե նա հառաջապեմ մաքերի ուժեղ քարոզներով հասկացներ թե՝ յեկեղեցին մի ժամանակ յեղել եւ զիտության, և բարեգործության, և ուսման, և քաղաքականության զեկավար, քանի վոր ոտար բռնավոր իշխանությունների լուծն եր ծանրանում հայ ժողովրդի հոգու և մարմնի վրա:

Մինչդեռ այժմ Հայաստանը իր հասուկ հայկական կառավարությունն ունի հայ լեզվով ու գրականությամբ, զիտությունը, բարեգործությունը, վորբե-

րի խնամակալութլունը՝ քաղաքականությունը, յերկրի վերաշինությունը նրան և անցնում, յեկեղեցուն մոռմ և Ավետարանի բարոյական գաղափարների քարոզությունը ու համապատասխան կենդանի գործն ու քարոզողի կենդանի, բարոյական որինակը և ջերմացակությունը հայրենիքի վերաշինության:

Այդ կը լիներ մի քայլ առաջ և յեկեղեցին այս կատարյալ անկմանը չեր հասնի, և վարկը կը բարձրացներ:

Բայց այդպիս չե, բոլորովին հակառակը, ինչպիս վոր յես նախատեսում եյի, ձանաչելով Գերագույն Խորհրդի կազմը: Նա վոչ միայն գրական գործ չի արել, այլ բացասականութ և թանձրացրել խավարը յեկեղեցու և ժողովրդի մեջ, շեշտել և կրոնական բռնությունը, վոր անթույլատրելի և և ստեղծել և խավարի տարորիւնակ թագավորությունը:

«Գերագույնի» որերում նոր-նոր անապաշտություններ են զլուխ բարձրացրել ժողովրդի մեջ. բը-որնիել ու բորբոքում և հեթանոսական հմայության, վճկության կախարդության, խարեւայության հոտը ի վաս մարդկային բանականության և քրիստոնեյական մաքուր գաղափարների. և յեկեղեցին փոխանակ հանգցնելու այդ մոլորությունը, փոխանակ մարդկանց հավատքը լուսավորելու ինքն և հրահրում կամ կրավորակերպ լուսությամբ, կամ ներգործակերպ:

Կարկուտ կապել, սիրո թալիսմաններ խզբել ամուլ կանանց յերեխա բերելու զիր անել գայլի բերան կապել, կորուստները գտնելու բթիկ անել, մաղպտառեցնել և իմանալ թե հիվանդը վոր սուրբով կը բժշկվի (ի գեպ. վոչ մի գուշակ Քրիստոսի մոտ չի ուղարկում հիվանդին, այլ մանր-մունը սուրբերի), ջրով, գարիով գուշակություն անել, թիզ չափել, կարտերով

մարդկանց զիլիին զալիքը գուշակել հնարյած կամ
հիվանդ ուզեղի յերազ-տեսիլքներով սարսափահար ա-
նել միամիտ ժողովրդին և այն, սովորական տարած-
ված խաբերայություններ են կրոնական գույնով և
ժողովրդի հոգին ու նյութականը զոհ են բերվում
այս սննահավատություններին, փորոնց հնությունը հին
տպիտության և հեթանոսության կրոնների մեջն և
թաղված:

Մոռացված է Քրիստոսը, լույսը, և պաշտպում և
տպիտությունը, իսկ յեկեղեցին լավ է:

Կողմնավոր, լուսնավատ ունեցող հոգեորականու-
թյունը կարող է տանել այս անարգանքը, վոր տըր-
վում և քրիստոնեյության հիմնադրին, մարդկային բա-
նականությանը: Ժողովրդասեր յեկեղեցին կարող է
անտարերությամբ զիտել թէ՝ ինչպես իր ժողովարդը
կեղեցվում է շահամոլ, անաշխատ խաբերանների ձեռ-
քով: Յերբեք:

Յեկեղեցին լուս և և որեցոր ավելի յեն զլուխ
բարձրացնում նոր-նոր սննապաշտություններ:

Փաճկանների պաշտամունքը, նրանց հետ կապ-
ված բոլոր նորաւեսակ խաբերայությունները, վոր ծա-
վալ և ստանում այժմ գավառներում վորակումն և «Գե-
րազույն Խորհրդի»: Այդ մոլորություններին ույժ են
տալիս սպեա, շահամոլ քահանաներից վոմանք, վո-
րոնց զիլին իշխանություն և լուսկյաց «Գերազույնը»:

Յես այսաեղ զնում եմ մի քահանայի կեղծ վո-
գերությամբ արած պատմությունները մի քանի յերկ-
սեռ անձերի առաջ և իմ ներկայությամբ:

«Մի զյուղում մի մարդու 5 տարեկան յերեխան
յերազ և տեսնում, վոր սխզանկամորուս ու կարապե-
տը (նա 34 տարեկան եր, վոր զիսատավեց, մորուքն

սպիտակ չեր լինի) հրամայում և նրան առավոտը փահեանի պարան կապել և խաղալ: Յերեխան իր յերազը պատմում է հորը, վերջինս բարկանում է վորդու վրա և խնդիրը չի կատարում: Հետեյալ գիշեր հայրն և աենանում յերազում «սիստկամորուսին», վորսպառնում է նրան աչքերի կուբությամբ, յեթե յերեխայի ցանկությունը չի կատարի:

Զարթնում է մարդը... կուրացած աչքերով զղջում և, մեղս և կանչում, աչքերը հետզհետե բացվում են և վաղ առավոտուն գյուղի մեջ, ժամի մոտ զերաներ եցում, պարան կապւում, յերեխայի ձեռքը տալիս և լարխաղացի թարազուն, մի յերկար ձող, վոր նրա ծանրությանն հավասար կը լիներ և տանում է զեղի լարը: Յերեխան անմիջապես վազում է լարով զեղի վեր և սկսում է պարել ազատ, համարձակ:

Ապշած ժողովուրդը հրաշքի զարմանքով լի հարցնում է մասնուկ լարխաղացին, ինչպես և վոր չես ընկնում, աղան ժպիտով պատասխանում է՝ ինչի պետք ե ընկնեմ, իմ պարանը լայն և գետնի նման, յես ենապես եմ տեսնում, ո. Կարապեան ինձ սովորեցնում ե խաղալ:

Հետեյալ որը հանդիսականներից մեկը պատմում է, թե գիշերն յերազում ո. Կարապեալ յեկավ և ինձ հրամայեց թե յեզր վազը տանը պահիր և տար թող փահեանի պարանի վրա խաղա. յես նրան շնորհը եմավել Յերազմեն յեկան, վոր վազելով, միայն յերկու վոսքով տասջին և հետին (մյուս յերկուսը ողի մեջ) բարձրանում ե պարանի վրա, թոշկոտում և մյուս ծայրիցն իջնում:

Շվարած ժողովուրդը հրաշքի զիմաց ահ ու զով և լցվում և առատ-առատ մասազների և ուխտագրությունների խոստումներ են մեջտեղ զալիս, սկըսվում ե հոսանքը զեղի ուխտատեղիները:

Այդակաղ լինում են հինգ կոմունիստ, վորոնք
հրաշքից շամած զնում են քաղաք, իրենց տոմսերը
հետ են տալիս թե մենք հրաշք տեսանք և կուսակ-
ցությունից դուրս ենք գալիս:

Եղի մի հրաշք լսեցեք, վոգեորվում ե տերտերս.
14 հոգի գնում են Սևան, նըանցից մինը, մի անհա-
վատը յեկեղեցու պատը կեղտոտում ե և անարգում
հավատը: Վերագարձին նավակը շուռ ե գալիս և 12-ին
խեղզում, ազատվում են միայն յերկու հոգի: (Թար-
սի պես, ազատվողը կոմունիստն է):

Խուս լսում եմ յես և քահանան հոգեոր հափշշ-
տակություն—հկատազ պատրաստելով լսող կանանց
համար, շարունակում ե ել ավելի հրաշալին: Նույն
գյուղում գիշերը յերեք ձիավոր են իշնում մի այրի
կնոջ գուռը և նրան զարթեցնում: Կինը գուռը բաց ե
անում և լսում հետեւյալ հրամանը.—Այ կին, առավոտուն
կը գնաս գյուղի մեջ քահանային և ժողովրդին կա-
սես, վոր մատադներ անեն, ուխտ գնան, թե չե հազար
տեսակ պատիճ կը թափենք մենք այս գյուղի վրա:
Ազաներ, առում ե կինը, ախր ինձ ով կը հավասա,
վոր առեմ: Մենք քեզ նշան կը տանք մարմնիդ վրա:
Այդ բոպեյին կինը ուսի վրա մի սաստիկ ցավ ե զգում
և ուշաթափ լինում: Առավոտյան գալիս են հարկան-
ները տեսնում են կնոջ ուսի վրա թիկունքի կողմից
ձիու նալի մի խոր հետք:

Դեպքը հրապարակվում է, սկսում են մատադ-
ները, քահանան վոգեորված ե:

Այս սռասպելները լսելիս ես ցավ զգացի, վոր
քահանայի բերանով խավարն ե քարոզվում և յեղան
հավատացողներ այդ սռասպելներին: Յես զայրույթ
զգացի, վոր մոլորությունը մթնեցնում ե միամիտ
մարդկանց բանականությունը և լսությունս ընդհա-

տելով զսպեցի քահանայի կեղծ վոգերությունը ա-
ռարկելով նրան և նա ձենը կտրեց:

Այս մի որինակ և միայն այն տարածվող սնա-
պաշտությունների, խավարի աստվածացման, վոր
տարերական և դարձել «Գելագույն Խորհրդի» որով,
վորը կամ լուսթյամբ կամ գուցե ներգործակերպ նը-
պաստում և խավարին, առանց ըմբռնելու թե իր յե-
կեղեցու վերջնական անկումն և պատրաստում: Են ել
ես որերում, յերք թուրք լուսամիտ մոլան իր ժողո-
վրդի մեջն ընկած իր մուհարրամի, շախսեյ-վախսեյի
տոնն և հայտարարում սնուապաշտության, վոր
փրկե իր մեջիդի վարկը, իր կրոնի լավը միայն. ես
են որերում, յերք Յեկոպայում քրիստոնյաները պատ-
րասպիում են ժողովներ անելու և կրոնից ու յեկեղե-
ցուց հանելու անհավատալին, հիթանոսականը, առաս-
պելականը, վոր քրիստոնյական լուսավոր գաղափար-
ները փայլ առնեն և ժողովրդի արդի բարոյական պա-
հանջները բավարարեն:

Յեկ այս աճող սնապաշտության դիմաց լոռու-
թյունն ինչն համար ե. աջնամբույրի, մոմավաճա-
ռության, խաչնամբույրի, միայն ժամանակավոր շահի:

Յեկ այս հոգեկան հիվանդությունը համարում
են կրօնական շարժումն, կրօնական վոգերություն:

Վերքան բարձր և հայոց հին յեկեղեցին այս
«Գելագույնի» որերի յեկեղեցուց. հինը անհավատու-
թյունների գեմ քարողչություն ունի, զրականու-
թյուն ունի, նույն իսկ պատժական որենքներ ունի:

Ուրիշ վորեե գործ, ուրախալի յերեույթ չկա
գելագույն Խորհրդի իշխանության որերում. իսկ ինչ
վոր կա, այդ այն ե, վոր այդ աննկարագիր անձերը
Եջմիածնում նստած մարտկն առել ու դադում են ի-

րենց այն միաբանակիցներին, վորոնց հետ անձնաշկան հաշիվ ունին, վորոնք այդ վողորմելի նոր պահաջներին խունկ չեն ծխում:

Որինակ՝ 77 տարեկան Բարդուղիմեռս յեպիսկոպոսին 8 ամիս և սովոր են մատնել, զրկելով նրան և ոռճիկից և պարենից. մարդուն կաթիլ-կաթիլ են սպահում:

Ինչու. վորովհետեւ գրագետ Բարդուղիմեռս յեպիսկոպոսը իր զրգույկներից մեկում նկարագրել ե «գիտնական» Մեսրոբ յեպիսկոպոսին, վորպես տգետի: Պաշտոնական պատրվածկը. այդ ել այն ե, վոր Գերագույն Խորհուրդը հիվանդ Բարդուղիմեռս յեպիսկոպոսից պահանջեց մի սենյակ իր բնակարանից հանձնել Ռուբեն վարդապետին. իսկ նա մերժեց, բացատրելով, վոր յերեք բժշկի տված վկայականով նըրան յերկու սենյակ անհրաժեշտ ե, մեկումն իր հիվանդությունը դարձանելու և կարիքների համար և ինգրեց, վոր իրենք ջահել յեպիսկոպոսները իրենց յերեքական սենյակներից մեկը զիջեն Ավարդապետին, յեթե անհրաժեշտ ե:

Փոթորկեց «Գերագույնը». բոպեն հարմար յեր Մեսրոբի թույնը թափելու ատելի մարդու վրա և վըճիռ զրին ծերունի յեպիսկոպոսին մատնել սովի, վոր համարձակվել ե նոր իշխանության հրամանը իսկույնը կատարել:

Յեվ զրանք են Քրիստոսի առաքյալները. նրանք վոր ասում եր՝ յեթե յեղբայրդ սոված ե, հաց տուր նրան, ծարավ ե ջուր տուր նրան:

Ի՞նչ անի, հայ ժողովուրդ, ծերունի յեպիսկոպոսը. զու չես հետաքրքրվում, կաթողիկոսին դիմեն ապարդյուն ե՝ պետությունը չի խառնվում. և միթե այս հայը, այս հոգեորականը, այս քաղաքացին սու-

վից պիտի մեռնի և կամ հուսահատությունից կախվի, ինչպես կախվեցին տարիներ առաջ այս յեղիսկուպուների անգիտությունից Բառնաբաս և Ղեռնդ վարդապետները.

Իմ «կարծիքը» իսկապես կատարվում ե. Գերագույնի անդամները մտրակով հաշիվ են մաքրում, արհամարանք ու կոպտություն ե իրենց թունու լեզվի վրա:

Իսկ ուրիշ գործ. վոչինչ չեն անում:

Յես պատմեցի թե ինչ հակաժողովրդական ձեռվատեղեցին Գերագույն Խորհուրդը... Կարևոր եմ համարում նաև գեկուցանել թե ինչ տակետակ հիմունքով կատարվեց այդ սկ գործը.

Առաջինը՝ զուտ անձնական յեսական հաշիվների և շահերի հիմունքով. այս հաշիվների լուսաբանությունը յես հետաձգում եմ ուրիշ անդամվա, յերբ Գերագույն Խորհրդի անդամների նկարագիրը տամ:

Յես կանգ կառնեմ այստեղ մի ուրիշ ներքին շարժառիթի վրա:

Տասնյակ տարիներ Եջմիածինը կոպիա, ազգավանական և անուղղելի սխալներ ե արել. Այդ սխալները յերկու տեսակ են՝ անգործություն և քաղաքական անմտություն:

Եջմիածինը վերջին տասնյակ տարիներում բացարձակապես վոչ մի գործ չի արել, վոչ դպրոցական, վոչ գիտական, վոչ բարեգործական, վոչ տնտեսական վոչ կրօնական, վոչ շինարարական. Վոչինչ չենք տվել ազգին, այլ միայն ստացել ենք ու կերել:

Եերկրող՝ յես անվանում եմ քաղաքական սխալ: Ի՞նչ հարկ կար Ավետարանին հակառակ և կարճամտությամբ քաղաքական անցուդարձին խառնվեր յե-

կեղեցին, պատերազմ՝ հորդորելու և մարդկային կոսուրածի կրակը հրահրելու դերն առներ իր վրա, հայրապետի կոնդակի մեջ կոչ գրվեր հայ ազգին թե «զնացեք կոտորեցեք»։ Այդ անուղղելի սխալանքի հետևանքը, դասն արդյունքը տեսանք։ Կոնդակի այդ խոսքերը հաղորդում էին Պոլիս և... ասրաբախտ հայ ժողովուրդը կոտորվեց բյուրերով։

Կարձամիտները նկատի չունեցան գոնե 18-19-րդ դարերի խոհեմ կաթողիկոսների (մինչև Խրիմյան), ազգութուտ բացարձակ չեղոքությունը պես-պես պատերազմների ընթացքում, վորի հետևանքով բարոյական հեղինակություն մնաց հայրապետությունը և նույնիսկ թշնամիներին հարգելի։

Այդ ժողովրդի անմեղորեն թափած արյան ծովի առաջ այժմ ցնցում և ամեն մի գիտակից հայ և զարթած գիտակցությունը հաշիվ և պահանջում «այս ի՞նչ արիք»։

Պետք եր բարոյական պատասխանատվությունից ազատվել և ահա կաթողիկոսի նախկին խորհրդականները հետ-հետ են քաշվում պատասխանատվությունից ազգի առաջ, մեղքը բարձում են միայն հայրապետի վրա և իշխանությունը ձեռքից խլելով, կամ մենում են չքմեղ ձեանալ թե ահա սխալական կաթողիկոսի իրավունքները մեր ձեռքն առանք, վորել սխալ չանի։

Այս մի անարժան աչքակապություն և, բայց կապը խիստ թափանցիկ հայ ժողովուրդը տեսնելու յե իսկական հանցապարտներին բոլորին միասին։

Այդ «Գերագույն» խումբը առաքելական կոչումն ունի, առանց բարեսրառության և առաքելական հոգեվոր բարձր հափշտակության, դրանց համար ամեն

ինչ և ամեն վոք իրենց անձին, շահին և փառասիրության և ծառայելու:

Դրանց ձեռքից հեռացան վանքից ամենաընտիր վանականները՝ փիլիսոփայության դոկտոր և լեզվաբան Յեղիկ վարդապետը, գիտնական Սմբատ սարկավագը, Կոստանդին, Գրիգոր, Պողոս համալսարանական սարկավագները, զույգ Ներսես, Մանուկյան Յերվանդ պատվական վարդապետները, բարի Մամբրե վարդապետը, գիտնական Արել վարդապետը, յերաժըշտագետ Ստեփաննոս սարկավագը և մանավանդ աստվածաբանության մագիստրոս, բեղմնավոր հեղինակ Յերվանդ վարդապետ Տ. Մինասյանը:

Սա հայոց յեկեղեցու վերանորոգության խնդիրը դրեց. գրվածքը խարույկը ձգեցին և հեղինակը իր հոգու այլրվելը տանել չկարողացավ, ցավելով ու հեզնությամբ զեպի այս նոր ինկվիզիտորները վերարկուն հանեց ու հեռացավ:

Յեկ վերջապես սրանց հալածանքից հեռացավ Եջմիածնից ու խելագարվեց աշխարհանոչակ յերաժշտագետ Կոմիտաս վարդապետը:

Սրանք անապատ դարձին Եջմիածնը. սրանք փակեցին Եջմիածնի դռները նոր մտնողների առաջ և բացին ընտիր յելնողների առաջ: Իրենք ել կմեռնեն և Եջմիածնը իրեն-իրեն կըգոցվի, ինչպես գրել ու գուշակել ենք շատ առաջ: Սրանց ազգին ճանաչեցնելու համար եմ ես գրել տարիներ առաջ «Եջմիածնի արդարությունը», «Անարդարության յերեսից», «Հայրապետական ընտրություն», «Ի՞նչու հեռացանք» գրքույկները և բազմաթիվ հրապարակախոսական հոգածները շատ թերթերում:

Սրանք ու իրենց նմանները հայ հոգեորականությունը կաստա - դաստակարդ դարձրին ուրույն շահե-

բով, իրենց գործելակերպով հեռացան ժողովրդից և վերջինս նրանից. մոռացան վոր կրոնը, յեկեղեցին, գիտությունը, ամեն ինչ ժողովրդի համար և և ինչ վոր ժողովրդին չի ծառայում նա պետք չե և վնասաբեր:

Այդպես ել հակաժողովրդական և «Գերազույն Խորհուրդը»:

Հայ ժողովուրդ, հայ յեկեղեցական, յեպիսկոպոս, վարդապետ, քահանա, գյուղացի, արհեստավոր, մտավորական, վոր ձուլված եք ընդունում ձեզ հայ ժողովրդի հետ, յեթե հետաքրքիր և ձեզ համար ձեր յեկեղեցու կյանքով զբաղվել, չարիքը վերացնել, փոռաթյունը հեռացնել, չը պետք ե՞անտարբերությամբ լըսեք, պետք և ձեր իրավունքին տեր կանգնեք և թույլ չը տաք, վոր այդ թխովի «Գերազույն Խորհուրդը» կոխոտե ձեզ, ձեր յեկեղեցին, ձեր ժողովրդին:

Պետք և ցրեք այդ «Խորհուրդը», յեթե ինքը խոհեմություն չի համարի ինքն իրեն լուծել և պետք ե ազգային—յեկեղեցական ժողով գումարելով յեկեղեցին բարելավեք ավետարանի և ժամանակակից աշխարհահայցքի հիմունքներով: